

Կ. ՊԱՏՐԻԱՐՔ ՏԱՆՅ ԿԻԼԻԿԻՈՅ



18 ի ո՞րքան անհուն բերակութեամբ կը լսենք հեռազբին այս լուրջը. «Թէր Ձեւն ՊԱՏՐԻԱՐՔ» :

Աստանայի լուսամիտ, մարտիրոս և աղետանկերու հայր՝ Գեր. Թէրգեան եպիսկոպոս կ. -Պատրիարքական ամբողին վրայ. այդ էր ժողովրդեան ընտրելին:

Հետազիրը որ կուպայ ճրճուեցնելու մեր հեռաւոր սրտերը, կաթողիկոսական շքեղ և փառապանն զահը չէ՝ որ մեզի կը պատկերացնէ Ն. Ա. Թէրգեան Պօղոս-Պետրոս Ժ.Ծ իր վրայ: Հընուանքի այդ ժողովին՝ Աստանան է, արինուս ցաղաքը, որ մեր դիմաց կ'երկարի կրակներու մէջ, որուն զմբէթը հայ կոծեր ու ողբեր կ'արձագանքէ, որուն Այհունը կարմիր կ'արտասուէ: Հոն հայ կուրծքերը զետին փռուած են, ոմանք անշարժ արդէն մեռած, ուրիշներ՝ Արշալոյսին դիմաց վերջին անգամուն համար աշխարհին կը թարթին, այլք վիրաւոր՝ օգնութիւն կը հայցեն. ու այդ վշտի և տառապանքի երկրին մէջ, փլատակներուն վրայ, դիակներու մէջ՝ Թէրգեան եպիսկոպոսն էր զաղասագողի մըթութեան մէջ կը շրջի իր ժողովրդին մոխիրներուն վրայ, և Հայորդիներուն անուն կը կանչէ, իր անոնք կու տայ անոնց, վիրաւորաւածները գրկելու համար: Հիմակ՝ «Թէրգեան Պատրիարք»: Այն,

1. Նորմանիք Հայրապետին զէմբը ամիսներ առաջ էինք իրմէն, անոնց է նպաստ կերպից որբեկներուն հատարակութիւն «Գիտուններ» էլ մը բորբոքելու համար. բայց Ն. Արքազնութիւնը փոխանակ իր զէմբը դրկելու՝ դրէս իր աերած ցաղաքին այրած շնչերը, բռասառթիւններուն ներկայացնալու առաջները: Եթե Հայրապետական Ամերոն վրայ բարձրանայ՝ այդ առթիւ իր ընդհանուր զործունութեան համ պատի ներկայացնենք զինքն առա իր զէմբով:

ՄԱՅԻՍ-ՑՈՒՆԻՍ. 1910

որ բոպիկ սաքերով, գլխիբաց աւերականերուն մէջ կը շրջի և կ'արտասուէ:

Թէրգեան Պատրիարք. մեծ յաղթանակն է այդ Սահմանադրական ժողովրդեան, ուրուն վրայ Ազարեանէն ասդին սեւեռած էր կաթողիկէ հայ ժողովովորը՝ իր միտրը ու յոյսը, որուն ամենամեծ հակառակորդն հանդիսացած էր անկեալ Սուլթանը:

Եւ ժողովուրդը, Երեսփոխանական ժողովը, Սինոդը ո՞րքան վատահացած պատի ըլլան արդար և արժանաւոր ընտրութեան վրայ՝ երբ Ա. Գահին անհուն գոհունաւութիւնն էր հաւանութիւնը կը լսէ:

«Թէրգեան Պատրիարք», բան մ'ունէր նա իր մէջ՝ որ իրեն կը քաշէր բոլոր հայութեան սրտերը, և ամրողջ հայ ազգին խինդն էր որ զուրս պոռթկաց սրտերէ, և ծափահարութեանց մէջ խորասուզուեցաւ իր սիրելի անոննը:

Իր անբասիր կեանքը, եռանդնալից գործունէութիւնը, ցաղցրաբարոյ. և հեզ վարմունքը, ժողովուրդին հանդէպ ցոյց տուած անձնանութիւնը, լայնախոհ միտրը և ուրիշ բազմաթիւ բառացինութիւնները յիշեցնել կու տան իր անուանակից Առաքելոյն զործունէութիւնը և Ա. Ն. Լամբրոնացւոյ հետեղութիւնը:

Եւ այն անկեղծ ինդակցութիւնները որ ուղղուեցան օսարազգի և հայ մամուլէն դէպ ի ն. Սըրբազնութիւնը, և բոլոր այն գնահատական տողերը որ երեցան լրագրացնեն Գերեզմանիկ Հայրապետը, և ապագայի Հայ Եկեղեցւոյ իրաւախոհ պատմագիրներ՝ պիտի ուզեն ուկեղէն տառերով գրել իր անունը:

Պօղոս Պետրոս Ժ. կ. -Պատրիարք Տանէ կիլիկիոյ՝ :

ՕՄԱՆԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆ

Ի. Ս. Ղազար

վկնեստիկ՝ հրճուանքով կը սպասէր Օսմանեան պատուիրակոթիւնն իրեն հիւր ունենալուն։ Օրերով առաջ թէ տեղական և թէ ընդհանուր խուալական մամուլը աւետեց անոնց զալուստը։ Եւ երկուչարթի (2 Մայիսի՝ Ն. Տ.) խուալական Սարունդը շոգենաւը խարիսխը նետեց Դրսական պալատին դիմաց՝ Վեճետիկ համելու համար 121 սամանցիներոք Տեղուսո Օսմանեան հիւպատոն Ռէլաւէտուին պէյ, իր բարուս զարին և Պէրովիչ փաշայի ու Պրոփ. Յակոր էֆ. Գրպանձեանի ընկերակցութեամբ, և Մլիիթարեան վարդապէտներ՝ ընդ առաջ եւան հայրենակից հիւրերու, նաև մանաւանդ որ այդ պատուիրակութեան մէջ կային նաև ինը պատուաւոր ազգայիններ։ Հիւրընկալները բարի վալուստ մաղթեցին և հիւրերը պատուեցին զիրենք իրու արեւելցի։

Սարտեղյոն ցամաց Հանեց Օսմանցիները.
Ա. Մարկոսայ հրապարակին ծովեզը կը
սպասէին Քաղաքապէտը կում Փլիբապոս
կրիմանին և Գաւառապէտը Նազարի-Բողբա
և բոլոր պաշտօնական Տօններու Նախա-
գանները՝ ընդունելու հիւրերու:

Եւ ահա քառորդուան մը մէջ Ս. Մարկոսի եղական հրապարակը կը կարմրի փեսերով. և վենետիկեցի ժողովուրդը հըմուանքով ու հետաքրքրութեամբ կը զիտէ զաննը՝ ամենայն ազնուութիւն առօնիւով:

Օսմանեան պատուիրակութիւնը այցելեց
քաղաքի բոլոր Վաճառականական Տու-
ները, Գեղարուհասական ցուցահանդէս-
ները, Գործարանները՝ առաջնորդուած տե-
ղացի և հայ հիպատէրներէ:

Զորեցաբթի առաօտ, Ա. Ղազարու
հրուանդանին ծայրը կը ծածանէր Օսմա-
նեան Դրօշը. և Դահիճէն՝ Ապտիւլ-Մէճի-
տի Մշիթաբեն Մշիարանովթեան շնորհած
մետաքսեայ մեծ Դրօշը. և առաօտեան
ժամը 8ին (Ը. Ե.) կոնտոլներով Ա. Ղա-
զար կը մտնէին ազգայինները : Ուրախ
զգացումներէ քամուած արցունքները կը

փայլվէին հիւրերուն և հիւրընկալներուն
աչքերուն մէջ և անոյշ ժպիտներով կը
սեղուուէին ձեռքերը : Հիւրերը՝ օտարու-
թեան մէջ իրենց ոտքը կը դնէին կարծես
հայ հոգի վրայ, իրենց երազած Ա. Ղա-
զարու կղզեկին մէջ. և հիւրընկալները կը
զգածուէին՝ այլ պատուիրակութեան մէջ
ամենէն պատուաւոր ներկայացուցիչները
տեսնելով՝ Հայ ազգին :

Քիչ մը տեսակցելէ վերջ՝ և կեղեցւոյ զանգակները հնչել սկսան, հայ պատուի-րակութիւնը փափազած էր Ս. Ղազարու մէջ լսել իրենց զատկական ձայնաւոր պատարագը: Յետոյ Հ. Ալիշանի գերեզ-մանը ուղղեցին տեսնել, և ահա այդ ժա-մուն լիսոյէն դէպ ի Ս. Ղազար կը հաս-նէին կոնտոլներ. Օսմաննեան պատուիրա-կութիւնն էր որ տեղւոյս Հիւպատոսէն կ'առաջնորդուէր:

Օսմանցի հիւրերն ընդունուեցան մեր հիւր ազգայիններէն և Միխիթարեան Հայրերէ, և առաջնորդուեցան դէպ ի գրատունը, Թանգարանը, տպարանը, վանքը և այլն. հետագրքը թեամբ ամէն բան դիտեցին ու զննեցին և յետոյ սեղանատուն առաջնորդուեցան պատուասիրելու համար:

Հոն խօսք առաւ Օննիկ էֆ. Պուլու-
տեան (Խօմիտէն) և պարտը համարեց պաշ-
տոնապէս ներկայացնել Միխիթարեան Միխ-
արանութիւնը իր գրգռունէութեամբ և Օս-
մաննեան պետութեան հասուցած պատուա-
բեր անձնաւորութիւններով, պաշտօնեա-
ներով, Երբ ազնի էֆէնտին իր խօսքերը
ծափերու մէջ վերջացուց խօսք առաւ

Սալոնիկի արդարութեան Տեսուչ Մէջմտութէ ձէլալ Պէյ. շէցաեց թէ Մի. Վարժարանն է որրան գիտութեանց, և թէ հնդն իսկ իր կրթութինը կը պարափ Փորթուգալիան Միքայէլ, Սազզլեան Ծովաննէս փաշաներու - Միիթթարեան աշակերտաց: «Վրատահ ենց որ այսուհետեւ ալ այս Համատառութինը պիտի տայ հայրենինց օգտակար անդամներ»: «Լայսրութեան ցեղերուն մէջ, շարունակեց ձէլալ պէյ, ամեննէն աւելի իրարու մերձաւորներն են Հայերը և Թուրքերը, և ես դէպ ի Անա-

տոլու ըրած ճամբորդութեանս մէջ տեսայ որ հայերը և թուրքերը իրարու խնամոց կը յանձնէին իրենց ընտանիքները՝ երբ ուրիշ տեղ կը մէկնէին. Այս դրութիւնն՝ անհանոյ երեցաւ հին կառավարութեան, և այնպէս մ'ըրաւ՝ ու ատելութիւնը փոխանակեց անոնց մէջ, և ասոր հետեւանց եղան կոսորածներն ու վշտերը՝ որ արիւ նոտեցին և կործանեցին երկիրը:

«Աշխատի՞նք մոռնալ անցեալը: Բոլոր Հայերը թէև կը յայտնեն՝ թէ ամէն ինչ մոռցած են, բայց թուրքերը չեն կարող մոռնալ, և ամէն անզամ որ յիշեն անցեալ՝ կը կարմին: Իը հաւատամ թէ ասկից վերջ Հաւասարութեան և Արգարութեան վարչութեան ներք՝ Միութիւնն աւելի զօրաւոր պիտի ըլլայ, և միարան պիտի աշխատինք հասարակաց հայրենեաց մեծութեան և բարգաւաճման համար»:

Գեր. Հ. Դաւիթ Աթոռակալ վարզապետը, որ ի բացակայութեան Գերազայից մարդու. Արքահօր հիւրբնկալեց պատուիրակութիւնը, խնդրեց քաղաքին ազնիւ Հիւպատոսին՝ թարգման ըլլալ Միարանութեան զգացմանց՝ հետազայ խօսքերով:

«Պատուիրակութեան այցելութիւնը մեծ հաճոյը պատճառած է մեզ. մեր համակրութիւնը անկեղծ է. և մենք այնպէս հաւատացած ենք՝ թէ կոսորածը թուրք ազգին գործը չեմ, այլ հին տէրութեան. Վստահութիւն ունենալով պազալին վրայ՝ կը մոռնանք ամէն բան. տէրութեան յարած մացած ենք միշտ. թուրքերէնը միշտ աւանդած ենք մեր վարժարանին մէջ՝ պահելու համար մեր կապը տէրութեան հետ. թէ ֆեար վերուցինք մեր աշակերտաց զլիքն՝ մասամբ մը իստալական ժողովրդեան ըննադապութիւններէն ազատելու համար էր, և մասամբ ալ աշակերտներն ինքնին գտուարեցան զայն կրելու, տեսած կամ լսած ըլլալով իրենց ընտանեաց կրած վշտերը»: Հիւպատոսն՝ Օսմ. Պատուիրակութեան դառնալով. «Ուրախութեամբ կը տեսնեմ որ Միիթարեանց միշտ համակիր զգացութեր տածած են տեղուս հիւպատոսարանին հետ. երբէց

դրօշը չեն ուզած փոխել, իրենց սրտերը խորտակուած էին երբ ես զիրենց տեսայ. բայց ժամանակն թժշկեց»: Եթեոյ ինքն իսկ Հիւպատոսն շնորհակալ եղաւ Միարանութեան, և ծափահարուեցաւ:

Սալոնիկի երեսփոխան Բահմի պէյի հօրելորդորդին թէվիր պէյ՝ շնորհակալ եղաւ յանուն Միարանութեան յայտնուած զգացմանց. երջանիկ էր տեսնելու Միարանութիւնը երկու ցեղերու մէջ նոր կայսեր օրով (ծափահարութիւնք), թէ՝ Համբատի վարչութիւնը կործանեցաւ, որոյ համար զոհ ենց ամէնցս ալ. և թէ հիմայ ամէն ցեղերու հաւասարութեան ժամանակ՝ պէտք է ձեռց ձեռցի աշխատինք մեծ հայրենիք մը կազմելու համար մեզի, որ յարգուի ամենէն»: Մի է նոյն ազնիւ զգացութերով խօսեցաւ նաև Պարիի հիւպատոսը:

Պատուիրակութեան նշանաւոր ներկայացուցիչները զոհ և ուրախ՝ մէկնեցան, թողով մեզ իրենց անունները՝ յորոց կը նշանակենց նէսսիգ պէյ՝ Տիսուչ Հանրային կրտութեան ի Սալոնիկ և զլուխ Պատուիրակութեան. Ֆազօլ պէյ՝ Սալոնիկի վիլյայէթի տեսուչ, Ահմէտ ձէլալ պէյ՝ Սալոնիկի զատական տեսուչ, Հասան Բահմանին պէյ՝ Տարտանելի զնդաձիզ զօրաց Հրամանատար, Ալի Ռիզա՝ Պոնիայի քաղաքավետութեան նախազահ, Օսման Նուրի՝ Պրուսայի շահազործական ընկերութեան նախազահ, Ահմէտ Շուրբը՝ հանրային կրթ. տեսուչ ի Սալոնիկ, Տօքթ. նէսզի պէյ՝ ուսուցիչ բուսարանութեան անտառային դպրոցին ի Պոլիս, Հալլիթ պէյ՝ զնդապետ սպայակոյսի ի Սալոնիկ, ևն.

Խակ ազգայիններէն՝ Յովսէփ Էքչեան (Սալոնիկ), Յ. Պուլուտեան (Խոմիտ), Վահան Գ. Փափազեան (Խոմիտ), Գրիգոր Աւեցանեան, Բ. Ջրացեան (Կ. Պոլիս), Արամ Պետրոսեան (Կ. Պոլիս), Յ. Գ. Ղազարոսեան (Երզնկա), Միհրան Միհնասեան (Տիգրանակերտցի) Ղազարոսեան (Կ. Պոլսեցի): Էֆէսահները:

Օսմ. Պատուիրակութեան Մեծ, անզամները երբ բարեւեցին զմեզ և շոգենաւ մեկնելու՝ յանկարծ ձայն մը կեցուց

շողենաւը. Հ. Գ. Վրդ, Նահապետեան՝ ող-
ջերթի խօսքերը ըստ.

« Կեցիր նաւիկ, մի՞ շտապիր, զեռ եր-
կու խօսք ունիմ ասելու մեր յարգելի
եղայրյաներուն, որ ահա կը հեռացնես կը
տանիս, բայց ոչ, մեր սրտերը զեռ ան-
րաժան կ'ընկերեն իրենց՝ մինչև հեռուն,
մեր քաղցր հայրեննաց ափերը:

Զեր այցելութիւնը, եղայրյաներ, նշա-
նաւոր է մեզի համար, և եզական դիրք
մը պիտի բռնէ Միխթարեան տարեգրու-
թեան մէջ: Երկու հարիւր տարիներէ ի
վեր, մեր Միհարանութիւնը հաստատուե-
լով Արքիականի գեղածիծաղ ալիքներով
ծափահարուած կղզէկիս վրայ, այս առա-
ջն անգամն է որ ազատ հայրենակիցնե-
րու պաշտօնական խմբի մը այցելութեան
պատիւն և ուրախութիւնը կ'ունենայ: Մի-
եր Միհարանութիւնը իւր հաստատութեան
օրէն՝ նպատակ դրած էր Եւրոպայի լոյսը
ճառագայթեցնել ասիական ափանց վրայ,
և ջերմացնել մեր հայրենակիցներու սրտե-
րը եղայրյութեան սիրով և համերաշխու-
թեան գաղափարով: Այսօր ի ձեզ կը
տեսնայ իւր փայխայած գաղափարի մար-
մացումը, և մարդասիրական գործի գի-
տակցութեամբը ինց զինքը երջանիկ կը
զգայ: Այսօր, Դուք իսկ կարող եղաց
անձամբ հաւասարելու որ երկու դար Ս.
Դապարու կղզին օտար երկնիք տակ, աշ-
խատեր է հայրենիքի երջանկութեան հա-
մար, աշխատեր է մեր երկրի արժանա-
պատութիւնը բարձր պահելու քաղացա-
կանացեալ աշխարհի մէջ:

Դուք մեր երկրի ընտրուած զաւակնե-
րէն, այցելութեան գալով զեղարուեասից
երկիրը, կը տեսնաց հոս մեր երկրորդ
հայրենիքը, որի հետ կապուած ենք սի-
րով: Խոտաիան ասպնջականելով մեզ զաղ-
թական հայերիս, ներջնչց մեզի ազնիւն
և գեղեցկին զաղափարները և արժարձեց
իւր հրով հայրենիքի վերածնութեան սուրբ
գործը, որը մեր դպրոցներու և աշակերտ-
ներու միջոցով, խաղաղ կուլտուրական
ճանապարհով մտա ընդհանրացաւ ժողո-

վըրդի բոլոր խաւերու մէջ: Կոյն գաղա-
փարներով տոգորուած Օսմաննեան Պետու-
թեան զաւակներն, այդ տաղանդաւոր և
յառաջաղէմ տարրի հետ համերաշխ գոր-
ծակցութեամբ, կարողացան երկու տարի
տաղաջ թօթափել թռնակալութեան լուծն և
աւետեցին մեզի Օսմաննեան Սահմանադրու-
թիւնը: Դուք, Եղայրյաներ, ներկայացուցիչ
էք այն դիցացաներուն, այն ազնիւ գա-
ղափարական գործիչներուն, ուստի բոլոր
սրտով կ'ողջունենց ձեր բարի գալուստը:
Դուք գարնան ծիծեռնակի աւետաւոր թե-
ւերով կը բերէց մեզի ազատ երկրի հո-
վերը և հեռաւոր պայծառ յոյսերու հը-
մայքը: Մեծապէս շնորհակալ ենք ձեր
թանկագին այցելութենէն: Դուք կ'ուղենո-
րիք ոէպ ի հայրենիք, Ձեզ կը մաղթենց
յաջողակ և երջանիկ վերազարձ ձեր սի-
րիլի ընտանեաց գիրկը: Տարէց նաև մեր
ջերմ ողջոյները մեր եղայրյաներուն, մեր
հայրենակիցներուն, որոնց կենդանի են,
ասացէք, որ Միխթարեան Միհարանու-
թիւնը հիացած իրանց զիցազնական ա-
րիւթեան վրայ, զափնեպսակը ձեռքին՝
կը յանձնէ պինդ պահել արեան գնով
ձեռք բերած ազատութիւնը, արդարազատ
ձեռքով ուղղել շնչաւոր նափ զեկը՝ ամեն
Օսմաննեան հպատակներուն մի և նոյն հա-
ւասարութեան, համերաշխութեան և եր-
ջանկութեան նաւահանգիստն առաջնորդե-
լու Ողջունեցէք մեր ինկած նահաստակնե-
րու գերեզմանները, և ասացէք՝ որ իրենց
չեն մեռած, այլ մեր ձեռքով կազմուած
Ազատութեան կոթողին կենդանի զարդերն
են. թէ իրենց գերեզմանը ցուրտ հողերը
չեն, ուր կը հանգչին իրենց ոսկորները,
այլ իրենց եղայրաց ջերմ սրտերու մէջ
կ'ապրին յուսով սիրով: թէ շիրմ զար-
դարող ծաղիկները՝ իրենց ընկերաց և քերց
համրոյներ և Փափառներն են, և առաւո-
տեան լուսափայլ ցողն իրենց յիշատակն
յարգողներու արտասուցն է, վաղաթար-
շամ կեանցի նշոյլն իւր մէջն զառելով:
առանց մեռնելու վախին՝ անմահ կ'ապրին
մեզի հետ:

Ողջունեցէք մեր հայրենի ափոմբները,

լեռները, իւր դաշտերը և ծաղիկները, և ասացէց՝ թէ Միսիթարեան զրիչն և մամուն, որ իրենց անցեալ փառքն իրգեր և երկասիրեր են, այսուհետեւ սրած և եղած են անմահացնելու իրենց նոր շրջանի գործերն ալ, որոնց պատիւ բերեն միր ազատ հայրենիքին և արժանաւոր վեհափառ Սուլթանի բարձր ուշազրութեան։

Առանձին պարոց կը համարիմ շեշտելու որ երկու դար այս կզզեկիս վրայ, ինչպէս տեսաց, ծածաներ է Օսմանեան կայսերական համակ մետաքսէ զրօն Հաթթի Հիւմայուն։ Միսիթարեան Միարանութիւնը իրաւամբ հպարտանալ կարող է այդ շնորհին համար, և խորապէս շնորհակալ՝ կայսերական բարձր հովանաւորութիւնը վայելելուն համար։ Ռւսափ կը խնդրենց վսեմաշուր Հիւպատոսներէն, որ հաճին թարգման լինել մեր զգացմանցը և ամենապատակ հաւատարմութեան, տարածելով յոտս կարսերական Միեծութեան վեհափառ Սուլթան Մեհմէտ Ե. Խանի՝ մեր խորին յարգանցներու և երախտագիտութեան հաւաստիցները. այն Միսիթարեան Միարանութիւնն անընդհատ ջերմ աղօթցներ կը մատուցանէ առ Բարձրեալն Աստուած վեհափառ Սուլթանի կենաց և փառաց, և Օսմանեան Սահմանադրական կայսրութեան հաստատութեան և մեծութեան համար։

Կեցցէ Սուլթան Մեհմէտ Ե. Խան :
Կեցցէ մեր Հայրենիքը » :

Բուռն ծափակարութիւններ վենետկոյ խաղաղ ճամկին վրայ արձագանգ տուին Հ. Գ. Նահապետանի զգացումներուն և Շողենաւը հեռանալ սկսու Ս. Ղազարէն և դեռ կը լսենք «կեցցէ Միսիթարեան Միարանութիւնը» աղաղակները. շոգենաւը դէպի ի վենետիկ կ'ընթանայ, բայց մեր և մեր ազնիւ հիւրերուն աշցերը իրարմէ չեն բաժնուիր, և մինչև զերջին կէտք՝ սպիտակ Բաշկինակներու շարժումներն են որ թարգմանը կ'ըլլան սրտերու

Վահագործ ԱՂԱՅՈՒՄ ԹՈՄՐԻԼԻ

Իտալական մամուլը ազգային սուգ յայտարարեց, երբ դառն կակիծով գումեց մահը՝ նշանաւոր բանաստեղծուհի Վիկտորիա Աղանուրի:

Բովանդակ աշխարհի մամուլը արձագանգ տուաւ այդ սուգին Եւ հայութիւնը զգաց ցաւով թէ մարեցաւ այն լոյսը՝ որ իր ծոցին նետուած կը պլազլար մօտաւորապէս, երեսուն և աւելի տարիներ խուլական գրականութեան մէջ։



Վիկտորիա Աղանուր Թոմրիլի

Այդ լոյսը Վիկտորիան էր, որուն դաշագին բով իր սպակիր կենաւու հպարտութիւնն կրնայ ունենալ հայ ազգը։

Աղանուր երբ կ'իմանար թէ Հ. Ա. Ղազիկեան իր Յայիտենական դրայցը հայերէն պիտի թարգմանէ, 1904ի Նոյեմբերի կիսուն սա թանկազին տողերը կը գրէր. «Ես հպարտ պիտի ըլլամ ներկայացուելուն և ճանչցուելուն Ձեզմով՝ Հայաստանի եղարյաներուն, այն մեծ բգտուածին, որուն համար իրացընէ պիտի ուզէի որ Մուսաս կարենար հնչեցնել երգ մը այնպէս ահեղորէն մեծաշուր՝ որ դահճճներուն ձեռքը դողացընէր»։

=====

Այս տողերն՝ այսօր երբ Բանաստեղծությունը հողակոյտին մօտիկ կը կարդանք՝ մեզի երգ մը կը թոփ, որ կը զգացնէ և կը յուզէ:

Հինգ տարի վերջ՝ ուզեցինք որ վիկտորիան մեզի հետ ողբայ իրը հայ՝ կիմիկան վերջին արհաւիրը, և յուսացինք իր խոստացած անէծքի երգը լսել այդ առթիւ «Գիղունի» էն. բայց ցաւ կը յայտնէր թէ հիւանդ ըլլալով պիտի չկարենայ մասնակցիլ հայ որբիններուն ի նպաստ հրատարակուեկիք Հանդէսին. և այդ առթիւ կը յգէր իր բարեները հայ որբերուն, և դէմքը՝ տիուր ու մտածկոտ, որ կարծես հայ աւերն ու արիւնը կը դիտէ...»

*

Վիկտորիա Ազանուր գուսատըն է կոմս Եղուարդի. ծնած ի Վենեսուէլ՝ 1864ին իտալուէիք մը: Եղուարդի հայրը Արքահամ, որուն կինն էր Մարիամ Թերեզա, Մագրասէն Վենետիկ կու զայ իր զաւակներով, որուն մէջ էր նաև Վիկտորիայի հայրը Եղուարդ 12 տարեկան պատանին (1835ին): Իրենց Ցեղարանութեան մէջ նշանակուած է՝ թէ Ազանուրեանը մէջն են այն գերի տարուած հայ կարաւանին՝ զորս Շահարաս Նախիջևանին և Հայաստանին իր երկիրը տարաւ և Ժի. զարու սկիզբը Նոր Ջուղայի մէջ բնակեցուց: Վիկտորիա սական ախորժած է իր ծառումը արևելեան Խորհրդաւորութեան մէջ թողուզ.

«Կրնայի՝ խօսել մանկութեանս վրայ, որ ծաղկեցաւ գրեթէ արեւելեան երազի մը մէջ, ունկնդրելով ժամեր, լոիկ մջջիկ, ուշազդիր խոշոր աչքերով, հայրենարադական երկայն նկարագրութիւնները հօրո՞որ եկած էր Ասիայէն՝ դեռ տղայ, և որ լաւ կը յիշէր իր շոշշողուն Ռայարադա աւամրանոցը, մեհենական սիւներով, ընդարձակ ու գեղեցիկ դարաստանով մը, ուր արմաւենինները կը բարձրամային երկնարերձ՝ իրիկուններու տապագիռնին վրայ, և արծիւ ձագերն հիր կու զային վերը՝

երկինքներու թափանցկութեան վրայ: Ու զինտ, բիւրեղ օդին, դարերով կոյս անտառներուն, Հնդկաց Ովկիանոսի մոռւնչներուն և վայրենի գեղեցկութեան մասին կը պատմէր եռանդեամբ, ու երթաւով կը բորբոքէր, կը վառէր իր հրաշալի տեսիւթին մէջ:

«Այնէն ինչ հոս մուր ու նեղ կը բուի ինձի, կը կրկնէր յաճախի, Ու մաց ինձի հայրենական արիւնին հետ՝ թելաղըանըը այն մըրկոտ պատմութիւններուն, բացի ծարաւ մը, արևու մոլութիւն մը, գարշանց մը բոլոր մէգերուն, ամպերուն դէմ, զարհուրանը մը բոլոր սահմաններուն դէմ...»:

Այս տողերով, Վիկտորիա արևելքէն եկած կը համարի իր մուսան, որ երգել տուաւ իրեն. և արհեստը՝ իր բանաստեղծ զաստիարակներուն Անդրէա Մաֆֆէի, Յակոր Մանելլայի, «Ամենազնիւ հանճար (Կ'ըսէ ինքն Ազանուր) վշտացած և ճընշուած ապերախտներէ . . .», և Հնիրիկոս Նենչիոնի, որուն համար Կ'ըսէ նորէն ինըը. «Խօսըի և զգացումի այն մոզը, անսահմանութեանց այն զարմանացանչ վերայաշնիշը որ ունեցաւ արուեստին բոլոր իւրացումները, հասկացողութիւնները և աստուածացումները»:

Ցովսեփինա, Վիկտորիայի մայրը, հինգ աղջիկ ունեցաւ, և յետոյ շուտով զկուեցաւ իր ամուսինէն՝ այրի մնալով: Յակոր Մանելլա, դաստիարակը հինգ քոյրերուն՝ նկատեց Վիկտորիայի մէջ հոգեկան կարողութիւնը, տաղանդ մը, և փոքրիկը այդ ցցուց՝ երբ օր մը իրենց պալատին պատուհանէն դիտելով Վենետիկեան հանդէսի մ'առթիւ կոնտոլներու և ցլանաւերու շքեղ անցուղարձը, բացազանչեց: «Ահ բանաստեղծուհի մ'ըլլայի և այս ամէնըը նկարագրէի». այդ ատեն հազիւ 7-8 տարեկան էր Վիկտորիա:

Վիկտորիա իր տաղանդը Կ'արտայայտէ լրացիններու և զրական Հանդէսներու մէջ, հրատարակելով ցերթուածներ, որոնք իրեն կը զրաւեն օրուան զրագէտներու ու շաղբութիւնը:

1. Ցաւիտենական Զբայց Հ. Ա. Ղազիկեան, Էջ Ժիլ.

Վիկտորիա 1901ին ամուսնացաւ կոմս Կուփոնյ Բոմբելիի հետ, և Վենետիկին Բերուշիա փոխադրուեցաւ, Բոմբելին քաղաքակտ և միանգամայն զրագէս էր՝ և երեսփոխան՝ իտալական խորհրդարանին, և քարտուղար եղած Երեսփոխանական ժողովոյ Նախագահին, Կըսուփ՝ թէ Բոմբելի նոյն իսկ քաղաքական ինդիրներու մէջ Վիկտորիայն կ'առաջնորդուէք:

Իտալական զրական մամուլը շատ զնահատական տողեր նուիրեց Ազանուրի բանաստեղծութեան, երբ հրապարակ հանեց ան 1903ին իր անդրանիկ հատորը, Յախտեհական զրոյցը, որուն մէջ ամփոփուած են բանաստեղծոււոյն ցիրուցան քերթուածները:

Այդ հատորը՝ թարգմանեց Աղանուրի անդրանիկ հայ թարգմանիչը՝ Հ. Ա. Ղազիկեան, ընդարձակ յառաջաբանի մը մէջ հայ ընթերցողներուն ներկայացնելով հայ Վիկտորիան՝ ինչ որ է իտալական զրագէտ – ըննադատներուն զիմաց:

1908ին Նոր բնարականելերը՝ (Nuoce liriche) հրատարակեց, որ նոյնպէս մեծապէս զնահատուեցաւ Դուրս մնացին այդ հատորին երկու տարուան մէջ հրատարակած քերթուածները, որոնց վերջին ներէն է «Սաֆֆոյի վերջին երգը»՝ Գեղունիկի մէջ հրատարակուած, որ իր իսկ վերյին ըլլալու սահմանուած էր, և անտիպ մնացած Վաղը քերթուածը՝ որուն մէջ պիտի մարէր ինըց բանաստեղծուէին ողբայի մանով:

Վիկտորիան ամիսներով արդէն կը տառապէց հիւանդութեամբ, և զինցն ծանր գործողութեան ենթարկելու համար՝ Հոռոմ կը փոխադրեն. բայց այդ ևս չիրկեց զինցն, և 7 մայիսին աւանդեց հոգին: Երւկորդ օրը իր ամուսինը չտոկալով զգացած ցաւին՝ անձնասպան եղաւ, հրապարակի վրայ թողով ողբերգական յուզիչ տիսարան մը:

Արտաշարժ մահերը՝ Վիկտորիայի գրական արժէքին վրայ շատ բան աւելցուցին. այնպէս որ զինըց իտալական առաջին բանաստեղծուէին կոչեցին, մոռնալով վայրկեան մը Այսու Նելլիին:

Հանդարս զրագէտներուն զիմաց կը մնայ Վիկտորիա ընտիր բանաստեղծուէի մը, բայց ոչ «Խտալիոյ մեծ բանաստեղծուէին». ան զգայուն, համակրելի, աղնուական, բարձր գրիչ մ'եղած է:

— «Մրցանակզ Մուսաներուն քով է», ըսած է իրեն Գարտուչչին:

Հ. Մ. Պոտուցիս

Ա Ր Յ Ո Ւ Ք Ա Ն Ե Ր Ո



Զէ՞ որ լուսնակն քո շիրմին կը նայի իր արծաթէ արտասուժներն ցողելով.

Հոյլ զեփիւաներն անոշաբոյր արտայնին

Զէ՞ որ կը լան գերեզմանիդ քարին քով,

Զէ՞ որ լուսնակն քո շիրմին կը նայի:

Ու իմ հոգին է վըստահար, սըգաւոր, Տընուր սոխակ, խնդն, բունագիր՝ չոր ծառում. Մերթ փախում են զաղունի վայրեր հեռաւոր Մերմիդ սրիքերն հեծեծանքովս թաթաղուն:

Ու իմ հոգին է վըստահար, սըգաւոր:

Գերեզմանիդ լըութիւնն են խանգարում Մեղմ զեփիւաներն հեծեծանքովս բեռնաւոր, Հօծում են թեզ, - «Քո Ցիշատակն մի սըրտում Վառ է անզերջ մի երկըրում հեռաւոր»:

Գերեզմանիդ լըութիւնն են խանգարում:

Հոյի ծոցից նայիր, օ՛ Քոյր, Լուսնակին, Երբ նա մաղուիք հասաւ ծառերի ճիւզերից. Գիտացիր թէ՛ ջինչ արցունքներն զառնազին Լուսնակն քեզի բերաւ սըրտէս սըգալից: Հոյի ծոցից նայիր, օ՛ Քոյր, Լուսնակին...

Արսէ Երկար

1. Հ. Ա. Ղազիկեան առաջին անգամ «Առութիւնը» 1898ին գրաբար թարգմանեց:

2. Հատորին մէկ մասը հրատարակուած է արդէն Յա-